Ա.

ԿԵՂԱՌՈՅՔ

Պռոշեանց իշխանութեան քաղաքակրթական–հոգևոր կեանքի մասին խօսել, նշանակում է նոյն իշխանութեան մէջ ծաղկած վանքերի պատմութիւնն անել, որոնցից շատերը հիմնուած էին նոյն տոհմի իշխանների կողմից կամ վայելում էին նրանց հովանաւորութիւնը։ Միջին դարերում հոգևոր–քաղաքակրթական կեանքը, գիտութիւնն ու արուեստը, դպրոցը, գրեթէ ամբողջապէս ամփոփուած էր վանքերում. իշխանական աշխարհիկ կեանքի հետ կապուած քաղաքակրթութեան, արուեստի, ճարտարապետութեան համար, հարկ ենք համարում այստեղ չեշտել, թէ ինչ որ ծաղկել է այս վանքերի մէջ իբրև գիտութիւն, արուեստ, գրչութիւն, շինարարութիւն, մատենագրութիւն և այլն իւր բոլոր բովանդակութեամբ Պռոշեանց անմիջական ստեղծագործութիւն չէ կամ նրանց ազդեցութեամբ յառաջ եկած, այլ նաև արդիւնք ժամանակի ժողովրդի բարեպաշտական զգացման, իշխանական նաև ուրիշ տոհմերի օժանդակութեան, եւ որ գլխաւորն է, այնտեղ հաստատուած հոգևորականութեան աշխատութեան, բայց և այնպէս իրաւունք

Պատկեր 121.

և ուրիշ նիւթական կուլտուրայի միացորդներ առհասարակ մեզ չեն հասել կամ քիչ են հասել, ոչնչանալով աւերիչ ժամանակի և բարբարոսութեան ձեռքից։ Պռոշեանց դերը մեր պատմութեան մէջ պարզելու համար, պէտք է պարզենք և նրանց հիմնած կամ հովանաւորած վանքերի, դպրոցների դերը մեր հոգևոր կեանքի և քաղաքակրթութեան նկատմամբ։

Ընթերցողին թիւրիմացութիւնից ազատ պահելու ունինք նրանց ծաղկումն ու անկումը կապելու այս տոհմի պատմութեան և բաղդի հետ իբրև այդ վանքերի ընդհանուր տէրերի և պատրոնների։ Նկարագրելով այդ վանքերի պատմութիւնը, ուսումնասիրելով արձանագրութիւնները, նրանց հետ կապուած անձնաւորութիւններն ու դէպքերը, շեղւում ենք նրանց պատմութեան անմիջական նիւթից, մնասում գործի գեղարուեստական ամբողջութիւնը, դժուա-